

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտոնային համար	
Տարեկան	10 ձր.
Վեցամսեայ	5 »
Արտասահմանային համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Անկախ թիւ համար	
Տարեկան	2.50 ռ.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆՈՒՊ ՎՃԱՐԵԼԻ	

Մասնացումը տարբերակներով կատարելու համար 40 ասեփիս է. իսկ վերջին երեսի համար 20 ասեփիս է. երեքին լուսնի ակազմներու համար 20 Օլո գնդը կըլայ:

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Г. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ԱԶԳ

Պատիւ ունիմ ծանուցանել տեղաւորս մէջ բնակութիւն հաստատող մեր յարգոյ գաղթական ազգայինոց, որ իրենք եւս այսուհետեւ տեղաւոր ազգայինոց նման իրաւունք ունին քուէարկութեան մասնակցելու, ուստի զայս ի գիտութիւն կը հրաւիրեմ ան ամէն գաղթական ազգայինքն՝ որ գալ բարեհաճին իրենց անունները արձանագրել աւել տեղաւոր ազգայինոց ընտրողական ցանկին մէջ:

Մ. Տէր Մարտիրոս Մարտիրոսեան

ՉԸ ԾԵՂՎԵՆՔ ԲՈՒՆ ՆՊԱՏԵԿԻՑ

Այս երկու երեք տարվայ մէջ արտասահմանում որչափ թուղթեր մտնում են, որչափ մարդիկ, տեսակ տեսակ դիմակներով, զգացմունքներով, ձգտումներով հրապարակ իջան գրիչով զինուած: Արտասահմանում կազմված գրական մի բանակ, կազմված անկանոն և անկիրթ «բաշխողականները», որոնցից ամէն մէկն էլ ուզեց իր ծրագրերը հայ ժողովրդի գլխին փաթածել, նրա կեանքի համար ճանապարհ գծել: Դրանք բոլորն էլ յեղափոխական դիմակի սակ երեսացին. բոլոր ամենալայն մտքով սարկահողի, թուրք ոստիկանի գեղին կոծակից սարսուղն անգամ, որ երբեմն հայ յեղափոխականի ստուերից անգամ սարսափում էր, վերջին աստիճանի լրբութեան հասած սկսեց ծագրել մեր եղած յեղափոխական գեղեցիկը, շարժումները, նրանց հեղինակներին և այդ բոլորը իբր թէ ժողովուրդին բուն յեղափոխական մտքեր, գաղափարներ և գործելու միջոցներ սովորեցնելու համար:

Այդ տեսակ մամուլին դիմագրելու համար մաքուր, բուն յեղափոխական մամուլը ստիպելու յեղափոխութիւնը պաշտպանել, ժողովուրդին վատ ազդեցութիւն

նրից հեռու պահելու և դրական հոգով, մաքով, սրտով ազդատ այդ վնասակար «բաշխողականներին տապալելու համար» եւ իր նպատակին հասաւ. գրեթէ չէզոքացրեց այդ գրա-յեղափոխական շարժումներին:

Ու այդ արդէն բաւական էր մաքուր մամուլի համար. սակայն մենք հիմա նկատում ենք որ յեղափոխական մամուլն էլ վարժվելով սովորական բանակոխներին ու սովորական ազատամիտ գաղափարներին, կարծես թէ ակամայից շեղվել է «իր բուն նպատակից» և մեծ կարեւորութիւն է տալիս առօրեայ խնդիրներին: Եւ այդ այնպիսի մի ժամանակ, երբ ամէն մի մտածող և հայրենասէր հայ համայնք է թէ մենք ապրում ենք ճգնաժամի մէջ, մեզ հարկաւոր է վճռողական քայլեր անել մեր վիճակը շուտով արմատականապէս բարեփոխելու համար:

Արտասահմանի ազատ մամուլի գլխաւոր նիւթ են կազմում այսօր, դպրոց, գրականութիւն, ընթերցարան:

Կանոնաւոր դպրոցներ, ընթերցարաններ, գեղեցիկ և առողջ գրականութիւն, պրանք բոլորը մի ժողովրդի յառաջագիմութեան համար շատ լաւ բաներ են, դրանք էլ որոշ չափով սատարում են յեղափոխական, ապստամբական գործին, բայց դրանց ներգործութիւնը դանդաղ է լինում, դրանց ազդեցութիւնը սերունդ փոխանելով է նկատվում:

Մեր վիճակը սերունդներ փոխելու ապա բարելաւելու վիճակ չէ: Մենք շտապելու պէտք ունենք: Ժամանակը մեզ չէ սպասում: մեր թշնամին դանդաղորէն չէ գործում: Այս ասելով մենք չենք առաջարկում յախուռն, առանց մտածելու քայլեր անել. ոչ, մենք առաջարկում ենք շտապել, արագ և կտրուկ մտածել. «բուն նպատակից չը շեղվելու, միշտ յեղափոխութիւնը առաջնակարգ հա-

մարել, ուժերի ամենալաւերը, ամենաընդունակները այդ գործին ներթել:

Ահա այդ պէտք է լինի արտասահմանի ազատ մամուլի բուն նպատակը: Դպրոցի և դրականութեան մասին ամեն տեղ կարող են գրել, բայց յեղափոխութեամբ միայն ազատ մամուլը կարող է զբաղվել:

Ուրեմն չը շեղվենք մեր բուն նպատակից:

ՎԱՐԴՈ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՏԻԱՐ ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶԻՆ

Լ. Աստուկեցի վերջին թիւին մէջ կարդացինք Նոր կեանքի «Հայաստան և Պոլիս» խորագրին սակ գրուած և թիւ երկար յօդուածներու պատասխանը այն մասերուն, որոնք ուղղակի առնչու թիւն ունէին ձեր անձին նկատմամբ:

Ձեր ցոյց տուած բոլոր փաստերը կատարելապէս ճշմարիտ են ու ջախջախիչ, նա մանաւանդ այն անձերուն առջև, որոնք տեղեակ են 76ի Պոլսոյ ազգային գործերուն: Արժիարի փախուստի ճամբայ չի մնար բնաւ, թէ եւ անկա ջանահար պիտի ըլլայ նոր ճամբաներ գտնելու: Արժիարը եւ ձեզ լաւ կը ճանչնայ ամբողջ ազգը: Իսկ ձեզի համար պատրաստած էք ողի մը, ուր կէ մինչեւ այսօր անսայթաք ընթացաք: Ապրիլ քոյր, ապրիլ ձեր նմանները:

«Արժիար, ձեր որակածին նման, հանճարեղ» մտացի եւ մարդահաճոյ է, սակայն անվստահելի իր նկարագրին թեթեւութեան պատճառաւ, իրեն սկզբունքն է բնաւ սկզբունք չունենալ: Ես ալ պիտի աւելցնեմ փարիսեցի մը, որուն ճապարհ գրէն եւ փառաքու լիզուէն մարդ հրապուրուելով՝ երբէք խարուելու չէ:

Պոլսէն հեռանալն ես քը՝ բացէք իր հրատարակած Մարտի եւ Նոր-կեանքի թիւերը, հոն պիտի տեսնէք անկասկած ընդդիմամարտ կարծիքներ ու գաղափարներ, երէկը այսօրուան հակահայնականութիւնը: պատճառը անոր «խղճին» հարցնելու է: Այսօրուան Արժիարի դիրքը կը նմանի պարզապէս շրջուն փողաճարի մը. որ իր կազմելիք «ազգային մարմնոյն» նոր անդամներ գտնելու մտադրութեամբ, հրապարակին մէջ կեցած իր փողով կը զարնէ ալ և ալ եղանակներ: Յաջողեցաւ, լաւ:

(*) Կասկածում ենք: Մ. Ս.

հակառակ պարագային կը փոխէ կեցած հրապարակը եւ յերբեքս եղանակները:

Ասիկա լաւ դիտանք. Պոլսէն լաւ կը ճանչնանք հետեւաբար իր գրութիւնները միշտ այդ սկզբունքով կը կարգանք իբր ժամանց:

Ազնիւ Չերազ, ձեր անուան ու գործունէութեան մասին երբէք չի կրնար ազարա բերել Արժիար մը իր երկայնապատում յօդուածներով:

Միայն ձեր նկատառութեան առաջարկ մը պիտի ներկայացնեմ. յարուցուած խնդրին շարժք փոխանակուած կարծիքները, ինչպէս յայտնի է, կը վերաբերին ազգային շրջանակին: Փափաքելի է որ ասոնք հրապարակուին արտասահմանի հայերէն թերթերէն մէկուն մէջ երկու բանաւոր պատճառներով: Նախ, ի՞նչ հարկ ձեր թերթին միջոցաւ հաղորդէք օտարազգի ընթերցողներուն ազգային կեանքով օգակաւորուած անձնական խնդիրներ, որոնք այժմէն թեմէն զուրկ են, եւ՛ ոչ ոնց մոզ օտարազգի ընթերցողները, անտեղեակ ազգային անցեալ գործերու, չի պիտի հետաքրքրուին բնաւ, ինչ որ հակառակ է ձեր վարած թերթին ուղղութեան: Երկրորդ, շատ մը ազգայիններ, ֆրանսերէն լեզուին անտեղեակ, գրկուած պիտի մնան մութ մնացած կարեւոր կէտերու բացատրութիւններէն:

Շատեր կարդացին Նոր կեանքի մէջ «Հայաստան և Պոլիս» վերնագրին սակ գրուած երկայնապատում յօդուածները. միամիտները եւ Արժիարը չի ճանչցողները ստիկն անոր բարեխիչ մը իր «մեղաւջան գործունէութեան» մասին. եւ բնականաբար յոռնիչ մըն ալ պահեցին ձեզի, ազնիւ Չերազ, վաճի վարժապետանցին փակման պատճառ ըլլալուց համար, ինչ որ ձեր գրապարտութիւն մըն է: Վարժապետանցին փակուելու պատճառը կրնան մերկապարանոց պարզել Մարտիրոսի հայ խմբագիրը եւ Սօֆիայի գլխաւորներին ակնոցաւոր հայ ուսուցիչը, ասոնք, նամանաւանդ վերջինը, առանց խղճահարութեան պիտի խոստովանին թէ՛ վարժապետանցին փակման պատճառը աւելի պէտք է որունել նոյն իսկ վարժապետանցին մէջ ու շուրջը, երկրորդական է Պոլսոյ որոշումը, որու մասին Չերազ եւ Պ. շատ խղճահարութեամբ եւ խոհական շրջահայեցութեամբ շարժած են: Ինչո՞ւ ուրեմն այդ միամիտները մնան իրենց թիւր համոզումներուն մէջ. քանի որ չի պիտի կարողանան կարգաւ ձեր հրատարակած թերթը:

Ահա այս երկու բանաւոր պատ-

ձառնելով կը խնդրուի որ այս սե- սակ անձնական եւ ազգային գոյն ունեցող խնդիրներուն շուրջ զար- ձած կարծիքները յայտնուին արաս- սահմանի հայերէն թերթերէն մէկուն մէջ, որոնց սիւնակները կը յուսամ միշտ բաց են ձեր առջեւ զայնպի- ղեալ միտքերը շինելու եւ թիւր համոզումները ու կարծիքները փա- րատելու համար:

ԱՒՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 29 Հոկտ.

Հոկտ. 27ին Մաքրի-գիւղի սե- փական տան մէջ վախճանեցաւ Խորէն Եպիսկ. Աշըգեան, Պօլսոյ 90ական թուականներու խի՛ոտ տիրահաշակ Պատրիարքը:

Զարմանալի զուգագիւղութիւն մը, ճիշդ 15 տարի առաջ նոյն ամսի 27ին վախճանեցաւ հայոց ուրիշ Պատրիարք մը, Երջանկա- յիշատակ Ներսէս Վարժապետ- եան:

Դիպուածը կարծես չարամիտ խաղ մը ըրաւ մահի մանգաղը Աշըգեանի վրին զարնելով ճիշդ այն օրը, որ օրը իրեն տրամա- գծօրէն հակառակ մէկուն կեանք- քին թելը կտրեց: Տասնհինգ տարի անշրպետ մը կը բաժնէ այդ երկու հանգուցեայները ի- րարմէ . . . բայց աւելի մեծ պատ- ճառ մը քան 15 տարին անոնց աճիւնները իրարմէ կը շատէ:

«Հող էիր և ի հող դարձիս» — կըսէ եկեղեցական ծիսակատա- րութիւնը երկուքին ալ համար: Երկուքն ալ հող դարձան: Հողը ամէն տեղ հող է, քիչ կամ շատ: Բայց այս երկու ափ աճիւնները իրարմէ կը բաժնուին խոր ան- դունդով մը: Յակօրէիկ մը կայ ժողովրդի սրտէն ծնած, խեղ- ճուկ արհեստաւոր մը, որ իբր հայու բողոքի մարմնացում՝ չը պայթած ատրճանակը ձեռքը կանգնեց և Աշըգեանի և Վար-

ժապետեանի աճիւններու մէջ. Յակօրիկը չի թողներ երբեք այդ երկու ափ հողերը իրար խառ- նուին, մի՛, նան:

Անմիտ. խղճալի գրչակներ, սեւ ու սպտակ կիրքերէ գրգռուած որքան ալ քարեր նետեն, որքան ալ նսեմացնել աշխատին Վար- ժապետեան Ներսէսի ազգայէն գործունէութիւնը՝ այնուամենայ- նիւ ան ՄԵՄ է ու ՄԵՄ ալ կը մնայ հայու համար: Իսկ այդ գրչակ- ներու վարժունքը մեղի կը յի- շեցնէ Գուգիւղին առակը.

«Տեսէք քթօթը որչափ քաջ է, «Որ փիղին դէմ ալ կը հաջէ»:

Աշըգեան ու Ներսէս՝ երկու հակադասութիւններ, մէկը հայու առաջատար, լուսաւոր ու ազա- տասէր ձգտումներու արտայայ- տիչ, միւսը հայու ստորնութեան, քծնող վատութեան ու ստրկական հոգիին մարմնացումը:

Աւելորդ կը համարիմ նորոգ հանգուցեայի կենսագրութիւնը ընել և գործունէութիւնը յիշե- ցընել:

Դագաղը բերուած էր Բերայի եկեղեցին, ուր ժողովուած էին «Պաս քահանայից» և ամէն հո- գեւորականք: Օրմանեան, Աշըգե- եանի հետեւողական ու աւելի ար- ժանաւոր յաջորդը՝ քարոզ մը թո- սեցաւ, պարզեց անոր արժա- նիքները, որոնց ինք այնչա՛փ զերազանցել կուզէ . . .

Երբեք Օրմանեան առկէ աւելի յարմար նիւթ չէր կրնար ունե- նալ իր հոգիին ու բնաւորու- թեանը համապատասխան . . .

Դաղիական առածը կըսէ՝ «Կեն- դանի անձերը պէտք է քննադա- տել, իսկ մեռածներու մասին միայն ճշմարտութիւնը ըսել»:

Աշըգեանի մասին, մեր հա- մոզմունքով՝ ճշմարտութիւնը սա է, որ խիստ անպէտք ու նոյնիսկ քննադատ Պատրիարք մը ե- ղաւ: Բայց բախտը անակնկալ խաղ մը խաղաց հայու գլխուն:

Աշըգեանէ ետքը Բարթօղիմէոսն ունեցանք իբր տեղապահ, որ իր ազգադաւ ստորնութիւնով մոռ- ցուց Աշըգեանը: Անկէ ետքը քիչ մը հանգիստ և ապա նորէն ուրիշ մը՝ տարբեր հրէշ մը . . . Օրմանեան մը զրկեց բախտը մեզ Աշըգեանին արժէքը մեր աչքին բարձրացնելու համար: Իրարու արժանաւոր երրորդութիւն մը՝ Աշըգեան, Բարթօղիմէոս և Օր- մանեան . . . մէկը գնաց՝ տառուը մէկլաներուն: Թերեւս Աշըգեան պիտի հարթէ մնացեալ երկուքին ճամբան:

Դուք, արասահմանի հայերդ- կը հասկնա՞ք թէ որչափ բարոյա- պէս ընկած, ստորնացած ենք մենք այսօր: «ՄԵՆՔ» ըսելով Պօլսոյ հայերս կուզեմ ըսել:

Ահա պղտիկ փաստ մը.

«Մասիս» գրաքննութեան վար- չութեան կողմէն ասկէ քանի մը շարաթ արգիւման դատապար- տուեցաւ: Այն ատեն այդ մասին չի գրեցի. ասիկա իմ կողմէս «բօլիթիզաց» մըն էր . . . ես ալ քիչ մը «հայ եմ», այսինքն քիչ մը «բօլիթիզաց», հիմակ խնդրիք հինցած է և վատեղ մը չեմ սե- նար, ատոր համար կը գրեմ:

Բանակաւ մը կար «Մասիս»-ի և «Բիւզանդիոն»-ի մէջ. Եթէ հանգուցեալ Արծրունին իր հա- կառակորդները իրաւամբ «սի- լիստաւոր» շտաբաններ կը կոչէր, մեր շոյ-աղաները կը վրդովուէին ատանկ անքաղաքա- վար բանակաւորներու առթիւ: Իսկ այժմ յիշեալ երկու թեր- թերը չեն գոհանար զիրար հար- ուածելով, այլ իբր իսկական «գիտական հրապարակագիրներ», կելլան ժառանգական, ցեղազրա- կան յատկութիւններ կորսնեն հակառակորդներու նախնիքնե- րու մէջ: Մէկը կը գանէ որ մէ- կալին «մայրը», լաւ լոնցէք մայրը, «անսակ կին մըն է ե-

ղեր» մէկալին ասկէ յետ չի մնա- լու համար՝ տարբեր գիտ մը կընէ . . . որ ասոր ալ մայրը լուա- ցարար մը և թեթեւ վարքի տէր մէկն է եղեր . . . ուրեմն . . . ինքն ալ անարժան խմբագիր մըն է . . . Ո՞վ իմաստուն Սոկրատէսներ, ով երեւելի զգուժապետներ . . .

Բանակաւ մը ասանկ ստորին ու երեխայական «աղտու լաթեր» լուսանալու շրջանին մէջ կը դառ- նար: Ու իշու հոգին սուրբ իջվե- րայ Բիւզանդ Էֆէնտի Բէչեանի: Բայց այս անգամ հոգին սուրբ զէշ ներշնչում մը ըրաւ Բէչեա- նին:

Բապուճին առած, հեւալով Բէչեան ինքզինքը սպագրական վարչութեան անհետնէր՝ գտաւ . . . բողոքեց: Բողոքը քիչ է. անար- շիտ ու յեղափոխական ներկա- յացուց իր հակառակորդը: Աս ալ քիչ է, նոյնիսկ ոստիկանու- թեան ականջն ի վար փողպաց նոյն զրպարտութիւնները:

Աղէկ որ սպագրական վարչու- թեան մէջ քիչ մը բարեացակա- մութիւն ու քիչ մըն ալ խելք կար. կրցին հասկնալ, որ Բէչե- եանին ըսածները «սուտեր են» և լով և Էկիրքերու ծնունդ հա- կառակորդը արմատականապէս ոչնչացնելու համար: Արդէն սո- սիկանութիւնը կուզէր միջամտել, բայց սպագրական վարչութիւնը պաշտօնապէս անոր հազորեց որ գործը իրեն ձեռքն է և հարկա- տորը անօրինուած է . . . Եթէ այս բարեացակամութիւնը չլլար՝ թե՛րեւս «Մասիս» ընդմիջտ փակ- ուած ըլլար ու անոր վարչները բանտերուն անկիւնները օչիլներ որսալու ելած ըլլային:

Ճարպիկ, սասանայ Բէչեան . . . իսկ Օրմանեանի ուղած մարդն է . . .

Զը կարծէք թէ այս երեւոյթը յատուկ է միայն Բէչեանի: Պօլ- սոյ ամբողջ բարձր դասը վարա- կուած է նոյն ախտով:

Անցեալները ախտը գիպուած ի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

(Շար. Ասխորդ Բիւիկ և Վերջ)

Տեղւոյն մէջ գաղթական հայեր յարձակումներ կը կրեն վերջերս Ա- րարացիներուն կողմանէ որոնք կամ- բաստանեն զիրենք ազու-գորդութեան ոճիրով. արարները եկեղեցին իսկ քարկոծելու կը յանդգնին, Սարա- ֆիէ թաղի հայ խանութպանները կատիպուին իրենց կրպակներն իսկ գոցել պահ մը այդ յարձակումներէն ինքզինքնին զերծ պահելու համար. բողոքներ կը ներկայանան թաղ. խորհրդոյ իրաց այս ընթացքին հանդէպ, մանաւանդ որ բոլոր հա- յոցս անմարտելի կը թուի վերադ- րուած անիրաւ ամբաստանութիւնը. մէկ քանիներ, հազիւ մահուան ճի- աններէն կազատին, կարծես Պօլսոյ

խառնակութիւններուն մէկ երե- տօյնն է որ կսկսի. բայց այս խլր- տումները չեն թելադրեր թաղ. խոր- հրդոյ փոխ- ասանապետը արմա- տական դարման մը խորհելու. միտ- քերը հանդարտեցնելու եւ հայոց վերագրուած ոճիրներուն անծիմն լինելը հաստատելու համար. եւ ահա արարները թաղերը մուկնեմի կան- չիլ կուտան զգուշացնելով հայերէն իրենց զուակները:

Տեղս կը հասնի վերջերս Ակնայ առաջն. տեղապահ աէր Յակօր քա- հանան, որ բանտային տանջանքնե- րէն այն ինչ ազատած՝ կը բաղձայ Ամիրիկա իր հայրենակիցներուն մծ- սը մեկնիլ: Տեղւոյս հայերը որոնք երկար ատենէ ի վեր կարող արժա- նընտիր քահանայի մը երեսը չեն տեսած, բաղձանքը կուենան Ա- զեքսանդրիոյ մէջ հաստատուած ան- նելու յիշեալ քահանան, որուն հմտութիւնն և ազգած պատկառու- քէն կըսպասէ զարթնում մը՝ թմրած մտքերուն: Սոյն բաղձանքը պաշ- տօնապէս կը յայտնուի թաղ. խոր-

հրդոյ, բայց ահա խորհրդոյ ան- դամներէն մէկը առաջինը կըլլայ շի- տել առաւ թէ «պիղի» ջոզ ազըլը յարազ կիշիկը, նախիջ օչուս պար- նապիլիթիզ» ու երկրորդ մը՝ իր վե- րապահութիւնը հետեւ յայտարար- ութեամբ՝ կը պատճառաբանէ:

«Ես կը վախնամ քահանայի անէծ- քէ, երբ նորեկը ընդունինք պիտի պարտաւորուինք ցաւ պատճառով առ- ժամապէս մեր մօտը գտնուած քա- հանային», մանաւանդ որ վերջինը պաշտպանութիւն կը վախել սեղույս քարոզչին, որուն անէծքն ալ մեր վրայ հրաւիրած պիտի ըլլանք»: Այս երկու ձայները բաւական կըլլան որպէս զի փոխ-ասանապետը ներկա- յացուցած խնդրանքը մերժէ. չէ՞ մի որ արդէն իր թելադրութեամբն է որ առաջին կարծիքը մէջ բերուած է իր պաշտօնակիցներէն մէկուն բերնով:

Եւ ցոյց տալու համար չափը զգա- ցումներու ազնուութեան մեր փոխ- ասանապետին, յիշատակեմ թաղ. խորհրդոյ մէկ որոշումն ալ, որով

կը պարտաւորեցնէ խորհրդոյ քն- դամները իբրբաւ եւ պաշտօնական բոլոր գրութեանց մէջ հփհնճիչ մակ- գիրը փոխանակել որ գործածել, փո- խանակ ճիւղի. զոր այսասանմանի հայութիւնը նախընտրեց ընդունիլ: Թաղ. խորհրդոյ խնդրանք ներկա- յացողներէն անոնք որ իրազեկ չեն այս որոշումին եւ ճիւղ կամ լայարդն վերնագիրը չգործածած են իրենց խնդրագրերուն մէջ, կրնան ապա- հով ըլլալ որ ընդունելութիւն չի պիտի գտնեն եւ եթէ անմիջական կերպով ալ չը մերժուին իրենց խնդրանքները՝ անպայման յապա- զուէնք պիտի կրնն աներկրայապէս Այս հակիրճ սողիքը բաւ իսկ են պարզելու համար թէ ո՞ր աստիճան գիտակցութիւն ցոյց կուտայ ներ- կայ թաղ. խորհրդը Սահմանադրա- կան արմատաբանութեանց կիրառման թաղ. խորհրդը չաա լաւ պիտի ընէր, վերոյիշեալ շրջաբերականնե- րը հրատարակելէ առաջ, հակում մը ցոյց տալու ժողովրդին իրաւունք- ներուն ճանաչողութեան, զորս

Փ. ՊՈԼԻՍ, 22 Հոկտ.

մը առթիւ «Մօնիթէօն Օրիան» թաղի խմբագրութեան անդամներէն մին բայ ճակատով կրօնքը «բաւ է որ ուզիմ վնասել այսինչ մեծ սրճարանին ահրոջը. փոքրիկ լըւը մը դրեմ եւ սող մէջ կը հասկցունեմ որ հայոց գործերու մէջ մաս ունի» . . .

Կրտսէնք որ մէայն Բէշեան և ընկերութիւնը չէ վարակուած այդ ախտով, այլ և եւրոպական գաղութին մէջ մասը:

Անբարոյականութիւնը կը շատ հայ ամէն անկման մօտեցող պետութեան մէջ:

ԲԱԺ

1 ՕՐԷՆՍ, 26 Հոկ.

Անյե՛նք անգամուան թղթակցութիւնն կը պարունակէր սեղանայն գրութիւն մասին՝ որը գրեթէ մակերեւոյթէն առած էր. կարգացած դասակարգի բարոյական նկարագիրը ու յեղափոխական անվայել ձգտումները արմատացած ու կարծրացած է. Այս անգամ ընդհանուր Լօրէնսի վրայ քիչ մը անդեկութիւն տալ կը պարտաւորուիմ «Մարտի» ընթերցողաց: Հոս գրեթէ 350 է աւելի հայեր կան՝ որոնք մեծաւ մասամբ գործարանի մէջ շարաշար աշխատող վարձկաններ են. որն ի բուն կաշխատին գրամ շահելու համար (ինչ որ իրենք չեն վայել) բայց չեն աշխատիր գէթ մէկ երկու ժամ զոհել իրենց բարոյական մտկորդակը բարձրացնելու համար. հակառակ անոր որ այս երկիրը «գիտութեան շտեմարան» կանաւորի հոս կամ Միացեալ Նահանգներ. Ունինք գրագրան մըն ալ, հարիւրաւոր կտոր գրքերով լեցուն. բայց ցաւալի է ըսել որ երեք հարիւր հայուն մէկ քառորդն անգամ անգամ չունինք. եղածներէն շատն ալ նրախ ալ կարգան, այնչափ ալ ետ կերթան. յեղաշրջում ըսուածը երբէք գոյութիւն չունի:

Ետսիրութիւն, փառամոլութիւն կուսակցամոլութիւն, ասեղութիւն, սոցիալութիւն, իմ և քու խնդիրները. եւ ի՞նչ պիտի ըլլայ, քանի որ այս աղտերը կայ մեր մէջ. կարծես թէ բամպակ և կրակ մէկ սեղ են:

Պարոններ ջանացէք իմ և քու ի սարութիւն չդնել, իմ և քու խնդիրներ մեր տունը քանդեցին. թէև ևս կուսակցական մը չեմ, բայց զիտող մըն եմ միշտ և ամէն անգամ, քանի որ գրագրանի վրայ կը խօսիմ, ալ չեմ վարանիր ըսելու մեր գրագրանի վարչութեան թէ՛ ինչո՞ւ համար ամեն թերթեր ու հանդէսներ գրագրանի կուզան (անշուշտ գրամով) և մէկ հատ «Մարտի» չի գար, որն որ իր գոյութենէն ի վեր կը շարունակուի, ոչ թէ «Վարդան ձայն» պէս պիտի վախուի որ գրամիդ ալ տաէ, ինչպէս ըրաւ վերոյիշեալ թերթի խմբագիրը ևն. Ահաւաստիկ ըսածներս հաստատելու մէկ կէտին փաստ մը. քանիցս լուծ ու տեսած եմ, մասնաւորապէս գրագրանի մէջ ալ «Մարտի» փնտռուած է. . . չկայ. . . մի կասկածիք թէ այս տողերը դրողը զաշնակցական մըն է և ատոր համար «Մարտի» կահնարէ, զոր Գաշնակցական թերթ կը հաշակէք. ոչ, միայն ես չեմ. փնտռողը տասնեակներ ալ կան և ատոնք չը նշանակեր թէ զաշնակցականներ են, զեռ շատ ու շատ բան կայ. որ մէկն ըսեմ. Բայց մէկ բան մը հոս զիս շատ կուրախացնէ, այն է իւր մը մը երիտասարդներ լեռ կերթան հրացանաձգութիւն կը սովորին, ընդհանրապէս շարժ զօրքը. բայց քաշալերով չկայ որ քիչ մը աւելի ստուարանան, կազմակերպուին ու որ մը հայրենիքի սուրբ դատին նուիրուին. ի սրտէ յաշնակցական կը մայրենք:

ԻՊՏՅԱԼ

«Իրաւունք» ի 78րդ թիւին մէջ Փ. ստորագրութեամբ յօդուած մը կար, ուր տեղոյն աղջային գործերուն վրայ խենթ ու խելառ գիտողութիւններ ընկէ ետքը, այդ ապուշ յօդուածագիրը մասնաւորապէս կը յարձակէր վարժարանին վրայ, հրապարակը պղտորելու համար:

Ատանց սպասելու որ «Մարտի» յարգող թղթակիցը, իր կողմէն համով դաս մը տայ այդ անճարակ տեղեկատուին, ես կուգամ դարձեալ գրիչը ձեռք առնել միանգամ ընդմիջող դիմակազուրկ ընկու համար այդ սողունները՝ որոնք զրպարտել, խեղաթիւրել, մատնել տարբեր գեր երեք չեն կրնար տեսնալ այս աշխարհի վրայ:

Պ. Փ. իր այդ նամակը վերջացած պահուն իբր թէ կիմանայ «Մարտի» թղթակցին Լեւոն Սարգսեան ըլլալը, և չեմ գիտեր ի՞նչ բացառիկ կարեւորութիւն մը ընծայելով ատոր, խնամքով նորէն նամակը կը բանայ ու յետ գրութեան մը կուսեցնէ, «կարճ և աղքատ»:

Եւ սակայն, եթէ Պ. Փ. ի գրածը ուշադրութեամբ կարգայ միլիպէսի մը, իսկոյն պիտի նշմարէ որ ամբողջ յօդուածը այդ կանխակալ կարծիքով գրուած է արդէն: Պ. Փ. չեմ գիտեր ինչո՞ւ շոքորթութիւն կը համարէ «Մարտի» թղթակցին գրածները: Անուրանալի ճշմարտութիւն մըն է որ, ներկայ հոգաբարձութիւնը քիչ շատ աշխատեցաւ վարժարանը ձեռի մը բերելու, և կը կարծեմ թէ բաւական յաջողեցաւ ալ: Ասկէ զատ, եթէ նոյնիսկ դէշ եղած ըլլար, միթէ իրենց ընտրածը չէ՞ր: Մենք սկզբունքով հակառակ ըլլալով հանդերձ այդ մարդոց, հաճութեամբ կարգացինք «Մարտի» մէջ երեւցած այդ արգարացի տողերը՝ որոնք առանց ու է նկատուի՝ կատար-

ուած զործի մը ներբողներն էին լոկ:

Յօդուածագիր պարոնին անկեղծութիւնը ալ ուսելի կասկածի տակ կը մնայ, երբ կը գիտեմ որ Պ. Փ. «Մարտի» գրածները շոքորթութիւն համարելէ ետքը, ինք չի համարձակիր հոգաբարձութիւնը ատանց անարժան էր ըսելու: Պարոն, անկեղծ եղէք, կամ ընդունեցէք որ «Մարտի» գրածները շոքորթութիւններ չէին, և ամչցէք քիչ մը սուտ խօսելէ, կամ, եթէ իրաւ շոքորթութիւններ էին, ուրեմն աւելցուցէք թէ հոգաբարձութիւնը անարժան էր ատանց, և այն ատեն կրկին ամչցէք. զուր՝ որ երկու ձեռքով, «ի ծագիլ արեւո», գացիք ձեր քուէները ընտրութեանց տուփին մէջ նետել արդի հոգաբարձութեան ի նպաստ:

Յուսախաբ եղաք. խոստովանեցէք գոնէ, և ինչո՞ւ այդքան շուտ. զուր՝ որ ուսուցիչներու արժէքը գնահատելու համար տարեկան քննութեանց կը սպասէք, հոգաբարձութեան աշխատութիւնը գնահատելու համար միթէ նոյն սպասողութեան հարկ չէ՞ք տեսներ:

Հոս ալ, Պ. Փ., հակասութեան մէջ էք:

Եթէ ամբողջ տարին, զէթ մէկ անգամ, վարժարան տըր կիսելու ձանձրոյթը յանձն չէք առած, եթէ հեռուէն կամ մօտէն, ամենադժոյն տեղեկութիւն մը չունիք վարժարանին ծրագրին, ուսուցիչներու մեթոտներուն և զատախօսութեանց եղանակի վրայ, ի՞նչ զերագոյն հանճարով, ինչո՞րեմ ըսէք, պիտի կարողանաք ուսուցիչներու արժէքը գնահատել տարեկան քննութիւն ըստած անիմաստ խեղկատակութենէն որ փափաքուած վարպետութեամբ ստրբել և ուղուածին շափ շափուցիչ ընծայել, ուսուցիչներու կամքէն կախում ունի լոկ:

Իսկ, Պ. Փ., թո՛ղ արժանա-

կանանկ խորին արհամարհանքով: Բարեբաղդաբար տեղուս մէջ մըտացի երիտասարդութիւն մը կայ, որ ոգի ի բոլին մաքտելով ապօրինութիւններու դէմ. գիշեր ցորեկ կը հակ որպէս զի այդ խորհուրդը աղգախոս ուղութեան մէջ չը խրի գիտովին:

Այսօրինակ երիտասարդութեան մը պակասն է որ Գահիրէի նման կեդրոնի մը մէջ խիզախ, աւերիչ, աղգախոս որոշումներու կը մղէ տեղուս վարչական մարմինը, որ կը բաղկանայ մեծ մասամբ աղջային գործող վիճակին տարրական հմտութիւնը չունեցող անհասանելի սկսեալ փաշաներէ, որոնց զիրքը իրաւունք չը պէտք է տայ իրենց, ըստ Սահմանադրութեան, փարիլ, եւ այն, իրրեւ inominabile անդամ, այնպիսի պաշտօններու որոնց համար բուսականաչափ չեն:

Գահիրէի վարչական մարմինը կարող է թէ արտասահմանի հատութիւնը իրաւունք չունի քուրթի ձայն բարձրացնելու Օրման-

եանի յիշատակութեան դէմ Տիմարներ, չեն խորհիր անգամ մը թէ արտասահմանի հայութեան (եղիպատահաններուն համար չէ խօսքս, լաւագոյն պիտի ըլլար հայ անունը վերցնել անոնց վրայէն, քանի որ լոկ fictive բան մըն է այն իրենց համար) մէն մի անհատը իր հոգեկան կապերն ունի այն երկրին ու զաւաններուն մէջ, որուն վարչական շրջանակին հոյիւ ընտրուած է Պատրիարքը. տարակայ հայր ի՞նչպէս լուռ մնայ եւ նու իրագործէ արարքները Պատրիարքի մը՝ սրուն հետեւած ուղութեան երեսէն, անդին իր հայրենիքին մէջ կը թալլուին, կը ջարդուին, առաթուր կը կոխուին իր գոյքերը, արիւնակիցները, և հայրենաւանդ սրբութիւնները՝ որոնց փարիլով միայն կրցած է զիմարտել ցարդ այնքան խժգոտութիւններու: Երանի կուսանք սակայն որ եղիպատահաններն և ոչ մին կերթայ հաստատուիլ Պոլիս, որ եթէ որ մը, Աստուած մի արասցէ պաշտօն մը տրուի իրենց ազգ-

կեդր. վարչութեան մէջ, ազգը վայրկեանին մատնելէ եւ իրենց արեւարբու վեհապետին քանցքը համարելէ բնաւ չի պիտի խրաչլին:

Բացառութիւնները այնքան անշուն են, որ յիշատակելին իսկ աւելորդ պիտի ըլլար: Եւ այս հայութիւն է, որ վարչական զէկն ի ձեռին ոչնի Գահիրէ, կը մարակէ իր ազգազիջները՝ մինչեւ բոլիսին յանձնելու չափ ամեն անոք որոնք մեր աննշական մէկ իրաւունքը կը կատարեն՝ զժգոհութեան ձայն բառնալով եկեղեցիին մէջ՝ ընդդէմ ազգակործան Պատրիարքի մը:

Կը հաւաստեն թէ անմիջապէս որ Պօղոս փաշայն նուպար դառնայ եւրոպայէն, Աղեքսանդրիոյ թաղական խորհուրդն պիտի պարտաւորէ տեղոյն հոգեւորականութիւնը որպէս զի վերսկսի Օրմանեանի անուան յիշատակութիւնը: Գիտենք արդարեւ որ համոզումի կամ գաղափարակցութեան հետեւանք չէր որ, ասանապես փաշային բացակայութեանը, փոխ-ասանապետը տեղի

տուած կը ժողովրդեան միահամուռ որոշումին և պահանջումին, հապաճնչման տակ միայն, որ արտաշայտութիւն մըն էր ժողովրդի ջորաւոր կամքին:

Այդ կամքը այսօր վիթխարի կոռուանի մը վրայ հաստատուած է. կը համարձակինք զգոռացնել փաշան որ փորձ չը փորձէ խաղալու անոր հետ, եթէ իրօք այդպիսի փափաքով մը կօրօրի:

Տեղական ազգ. գործերուն կանոնաւորութեանը համար, երկաթեայ բազուկներ պէտք են, և այդ բազուկները այն պարագային միայն կարող են ստորին երբ մի անգամ ընդ միշտ յենարան ընտրեն մեր Սահմանադրական սկզբունքները, իրրեւ dictateur գործելով չէ որ ժողովրդին համակրանաց և: Երախտագիտութեանը պիտի արժանանան մեր փաշաները որոնց ազգ. կեանքի պատկացութեան չափը շատ իսկ տեսանք երեք տարիներէ ի վեր. . .

ԽՃԻԿ

Աղեքսանդրիոյ, 12 Հոկտ. —)(—

պատուութիւնն ի դէպ վերաբերուի երբ ըսեմ թէ՛ ձեր այդ թղթակցութեամբ՝ կրթական գործերէ հիւլէի չափ չի հասկնալն իդ պայտուցիք: Չոր խօսք մը չէ ըսածս, կապացուցանեմ: Գուք՝ որ «Շարժում» ի այդ համալուար թղթակցութեան հեղինակը իմացած է ի.բ. յանկարծ (ձեր մասնաւոր հեռագիրներէն անշուշտ) ու գիտէ ի.բ. թէ՛ ձեր ենթադրած թղթակցիցը հինուց, շատ հինուց բարեկամ էր մեր ներկայ ուսուցիչներուն, անոնց հետ ապրած, անոնց հետ պաշտօնավարած, անոնց հետ իր կեանքին ամենէն անմեղունակ վայրկեաններն անցուցած, ինչո՞ւ կանխահաս համարեցիք այդ գովասանքները: ուսուցիչ մը հոգեբանութեան մէջ, այս պարագաները մեծ դեր կը խաղան, ան կրնայ գովել մեր ուսուցիչները, եթէ Չինաստանի մէջ ալ պաշտօնավարեն, որովհետեւ անոնց մեթոտը, անոնց դասախօսութեանց ոգին, թափն ու եռանդը արդէն վաղուց ծանօթ է իրեն: Իսկ անծանօթ մը եթէ քսան քննութեան ալ ներկայ գտնուի, կրկին չի կրնար լրջօրէն կարծիք յայտնել ուսուցիչ մը մասին: Խօսքս հասկացողներուն համար է:

Կուզէի Տ. Գ. ի յօդուածին միւս կէտերուն ալ պատասխանել. բայց, ի՞նչ մեղքս պահեմ, բան չի հասկըցայ, թէ եւ քանի մը անգամ ալ կարգացի:

Քիչ մը յտակ ելէ՛ք, պարոն, եթէ կարելի է, և ձեր գրութեանց մէջ խոյս տուէք երկդիմութիւններէ:

ՇԱՀԱՊ

Յ. Գ. — Գրականութեան մէջ հետեւող մըն եմ. ուստի, յարգելի ընթերցող, թողտուութիւն ըրէ որ այս անգամ ալ հետեւիմ Պ. Գ. ի թղթակցութեան սա յետ գրութեամբս՝ որուն բոլոր պատասխանատուութիւնը բանաձեւին բունիակ հեղինակին վրայ կը ձգեմ:

«Նամակս վերջացուցեր էի, երբ իմացայ որ «Իրաւունք» ի 78րդ թիւին մէջ երեցած Թիւրքի պէն Գ. ստորագրութեամբ թղթակցութիւնը Մարտիկայի խանութեան մէջ իմանալու համար գրէին՝ Գրիգոր Թիւրքի ճանի գրէին ելած է: Գաղտնիքը կը պարզուի հիմա, Քիչ մըն ալ շուր պղտորելու է ես՝ Բայց այդքան ալ օձութիւն . . .

նոյն

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վանայ ներսէն ելուի զրկած տեղեկագրին համաձայն Վանը 1000 ոսկիի անհրաժեշտ պէտք ունի ձմեռուան մէջ արմտիք ամբարելու համար:

Նպաստից յանձնաժողովը որոշած է նորէն 250 ոսկի Վան

զրկել, որովհետեւ հանգանակած ամբողջ գումարը առայժմ միայն 500 ոսկի է:

— Կարապետ Ասլանեան ուսուցիչը, Երուսաղէմ ուխտի երթալու համար 20 ոսկի նուիրեր է Պօլսոյ Ազգային Հիւանդանոցին:

Իսկ եթէ փոխանակ ուխտի երթալու, ճամբու ծախքը նուիրեր Ռուսչուքի աղքատ մանուկներուն. Քրիստոսին աւելի հաճելի պիտի ըլլար: Որովհետեւ Քրիստոս մանուկները աւելի կը տիրէր քան Երուսաղէմը: Բայց մեր այդ էֆէնտիները Քրիստոսին հասկնալու և անոր պատուէրները լաւ կատարելու համար, դեռ շատ հաց ու պանիր կուզեն:

— Նպաստից յանձնաժողովը մտադիր է Պ. Ջանշեանի վերջին անգամ զրկած գումարը յատկացնել Տիարպէթի ազգային որբանոցին, եւ այդ որբանոցին համար նպաստից սնտուկին տրուած ամսական 15 ոսկին բաժնել մէկ քանի կարօտ վարժարաններու:

— Կիլիկիոյ տեղապահը Պօղոս Կալայի ղեկավար պիտի բողոքէ Շահնազարեան կտակի գումարի առկոսին՝ Արմաշի գարեջուրի յատկացուած ըլլալուն համար: Կը կարծուի թէ գուցէ Սսեցի քանի մը տղաքներ ալ ետ կանչուին գարեջուրէն:

— Մուշի տեղապահը միջոցներ կը խորհի ելքեր և բանակցութեանց սկսեր է «ըստ Սըրբահանգակի սուած լուրին» Ս. Կարապետի և միւս վանքերուն շուրջը թթաստան ձեւացնելու, (թուրի ծառեր տնկել) վանքի հասոյթը ապահովելու համար:

— Վանայ բողոքական հայ հասարակութիւնը շահատականութիւններով կը զբաղի. զանազան պաշտօններ ձեռք բերելու համար միսիօնարական հիմնարկութիւններու մէջ, իրարու դուրս կը լարեն: Մէկ խօսքով օտարէն ստանալիք կտոր մը հացի համար կը դիմեն ամէն տեսակ վատ միջոցներու:

— Պուլկարիոյ հովիւ Պաղճեան վարդապետը տեղեկագիր մը զրկած է Պուլկարիոյ ազգային եկեղեցական գործերու վրայօք, ուր մատնանիչ ըրած է տեղական գործերու անկերպարան և խառն վիճակը:

— Տխրահուշակ Խորէն Աշրգեանը մեռեր է, և թաղուեր է ըստ «կարգին» Մելիքսէդէկի. իբր թէ 500 ոսկիի չափ գումար մը կտակած է եղբի Արմաշի վանքին, ան ալ վերջը ինքը ծախսեր է: Վերջապէս խառնափնթոր կտակ մը, ինչպէս ինքը խառնափնթոր էր իր կենդանութեան ժամանակ: Բարի ճանապարհ Աշրգեաններուն: Որչափ շուտ վերջանան, այնքան ազգին աղէկ կըլլայ:

—)(—

ՍԵՒԿԻՐՔԸ

Ակուսները թափած, զեկը կորուցած «Արմէնիա» ի համարները կը լեցուին Դաշնակցականներուն ուղղուած յարձակումներով: Երբեմնի յեղափոխական, վարժապետ, քարոզիչ իսկ հիմակ «մրգւած խանութպանը» սեւ կիրքերէն և շար նախանձէն այնքան կուրացած է որ իրեն թոյլ կուտայ Վարազ ստորագրութեամբ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը, մեր ներքին թշնամի Տրոտարակել: Խորհուրդ կուտանք բոլոր հայ մարդոց կարգալ այդ հոշակաւոր թիւը ժե. տարի, 29ը:

Մ. Փորթուգալեանի վրայ մահարձան կանգնեցնելու ժամանակ այդ յօդուածը ամբողջովին ոսկեայ տառերով պէտք է արձանագրուի «անմահ, խելացի, աղնիւ և հայրենասէր» խանութպանին տապանաքարին վրայ:

Վարազի ընտանին «խոզն» է. իսկ խոզերը միայն աղբանոցներուն մէջ կը պտտին:

Իեզճ Փորթուգալեան՝ ինկար այդչափ, հը՝ Խոզերու համար աղբանոց մը պահելու աստիճանին հաւասար հը՝:

Եղուկ . . .

ՀԻԻԼԷ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պերլինի մէջ լուր տարածուած է թէ Անգլիա և Գերմանիա որոշած են, Ամերիկայի համաձայնութեամբ, որ Սամօս կղզիները բացի Թիւրքիա և իր յարակից կղզիներէն, Գերմանիոյ պատկանին:

— Սերպ մը բաղմաթիւ սերպերու կողմէն դիմած է Անգլիոյ պատերազմական նախարարին առաջարկելով կամաւորներու խումբ մը կազմել Անգլիական զօրքերուն ծառայութիւն մատուցանելու համար: Նախարարը շնորհակալութիւն յայտնելով հանդերձ այդ առաջարկութիւնը մերժեր է:

— Ռուսական արտաքին գործոց նախարարը, կայսեր կողմէն հարցուցած է Թրանսվալի ներքին յարցերէն արդե՞ք Թրանսվալը ռուսական Կարմիր խաչին տուած օգնութիւնը գրամով կուզէ թէ դեղերով և բժիշկներով: Անգլիական կառավարութիւնը Թրանսվալի գործակատարութեան թոյլատրած է այդ հեռագիրը Բրէտտորիա զրկել:

— Ռուսիոյ ձարը և Գերմանիոյ կայսրը Պօտտամի մէջ տեսակցեր են. Գերմանական «Կազէթ-Վոս» թերթը այդ առթիւ կը գրէ թէ՛ — թէ եւ Գերմանո-Ռուս յարաբերութիւնները աւելի ազնկցան այս տեսակցութիւնով, սակայն գերմանիա Անգլիոյ հակառակ գործ մը չը պիտի ընէ: Որովհետեւ ան կողմէ բարեկամական յարաբերութիւններու մէջ ըլլալ թէ Ռուս ոյ և թէ Անգլ-

լիոյ հետ: Պօտտամի տեսակցութիւնը ձարին պիտի համոզէ որ Ռուսիոյ հետ բարեկամ ըլլալը չի նշանակէր Անգլիոյ հետ թշնամի ըլլալ: Կանխարգրներ ալ որ հայառակ, դէպի Անգլիա թշնամական կարծիքներ կը յայտնեն:

— Թրանսվալէն դեռ որոշ տեսակցութիւններ չըկան: Պօտերները անգլիացիները կը նեղեն. երբեմն երկու կողմէն ալ չափազանցուցած լուրեր կը հասնին: Լատիսմիտը դեռ առնուած չէ: Անգլիական զօրքերը կամաց կամաց տեղ կը հասնին: Քիստոսը հրամանատար Պիւլլէր լուկ Միլիէ, կսպասէ զօրքը հաւաքուելուն: Դժբախտ ժէնէրալ Ռիա Լատիսմիտի մէջ պաշարուած կը դիմադրէ թշնամուն: Անգլիական մեծ յաղթութիւններու լուրեր ասարածուցան, բայց սուտ կը կարծուին: Անգլիական կառավարութիւնը և ժողովուրդը մեծ պաղարկում թեամբ կը տանին Թրանսվալէն եկած գուժերը, ուրիշներու միջամտելուն բոլորովին հակառակ են և յայտարարած են որ ամէն մէկ առաջարկութիւն միջամտութեան մասին պիտի մերժուին: Մէկ խօսքով չը նայած Թրանսվալի մէջ պատահած դժբախտութիւններուն, Անգլիական կառավարութիւնը և ժողովուրդը ամէնուն դիմաց կարուկ և անվախ դիրք մը բռնած են և շարունակ կը զինուին ու կը պատրաստուին:

— Բանի մը եւրոպական լրագիրներէ գրեցին թէ Գերմանական կայսրը, Թրանսվալիոյ դէմ հրատարակուած պատերազմին պատճառաւ Անգլիա չը պիտի երթայ. բայց հիմա այդ լուրերը սխալ կերտին: Վիլհէլմ Անգլիա պիտի երթայ կնոջ՝ և երկու աղջիկներուն հետ:

ՆԱՄԱԿԱՍՏՈՒՓ

Ամերիկա Բրոյլիէնս, Պատրոս Մանօսան. — Ձեր առաջին անգամ զբրկած 5 տարբը ստացանք:

— Ամերիկա Մորէնս Գալարի Մարտիկեան. — Ձեր զրկած 5 տարբը ստացանք:

— Չ. Է. Մ. — Ձեր զրկած 35 ֆրանքը ստացանք. պրօշտաները զրկեցինք: Ձեր խնդրածի մասին կայնատիք. կը գրենք ուր որ հարկ է: Երբ պատասխան առնենք ձեզի կիսացնենք:

— Համբարձում Համբարձումեան, Կէյվէ գիւղացի. սափրիչ ուր որ է թող հասցէն խմբագրութեանս հարցրէ Ամերիկայէն կը փնտտուի:

Թ՝ՏՐՈՒՆ «ԱՆԿԷԼ ՍԼԱՎՈՅ»

«Վէսէլլօ» հայ թատերական խումբը, վաղը գիշեր, նոյեմ. 4, պիտի ներկայացնէ «Երթի շօնուգլու պապա» կատակախաղ 3 արար, Մօլիէրի երկերէն թարգմանուելով մաճկերէն՝ կեանքի վերածուած է:

Խիտ ծիծաղաշարժ Կաւշտ մը՝